

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՀԱՅ ԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅ ՆՈՒՐԱՐԻ ՆԱԽԱԿԸ.

Վսեմափայլ Տ. Պօղոս փաշայ Նուբարն իւր 1 մայիսի ներկայ 1914 թուի նամակով ի միջի ալոց գրում է Նորին Վեհափառութեան հետեւալը:

«Սորապէս զգացուած եմ և շփոթահար այն զգացումներուն համար, զոր Ձեր Ս. Օծութիւնը բարեհաճած է արտայայտել 20 փետրվարի ամսաթիւ Հայրապետական օրհնածիր կոնդակին մէջ*):

«Ձերդ Վեհափառութիւնը կը յայտնէ ինձի իր գոհունակութիւնն ու ինձի վստահուած պաշտօնը կատարելու մասին ըրած ջանքերս կը գնահատէ, այնպիսի բարեացակամ ներդրամութեամբ մը որ սրտիս մէջ միշտ քանդակուած պիտի մնայ:

Եւրոպիոյ մէջ Ձեր Վեհափառութիւնը ներկայացնելու պաշտօնին կոչելով զիս, իբրև Ազգային պատուիրակութեան նախագահ, պետութիւններէն, ինչպէս և Բ. Դուռնէն պահանջելու համար Բերլինի գաշնադրով խոստացուած բարենորոգումներու գործադրութիւնը, — որ միայն կրնար վերջ մը գնել Ասիական թուրքիոյ մէջ մեր հայրենակիցներուն տառապանքներուն, — Ձեր Ս. Օծութիւնը իր վստահութեան թանկարժէք ապացոյցը կուտար և ինձի կը յանձնէր պաշտպանութիւնը այնպիսի գեղեցիկ դատի մը, որ չէի վաբանիլ ընդունելու, հակառակ գործին դժուարութեանց, զոր ինձի համար իսկապէս ծանր կզգայի:

Պարագանքը բարեբախտաբար օգնեցին մեզի, և պետութիւնները, Ռուսիոյ վեհանձն նախաձեռնութեամբ, յանձն առին ոյժ տալ մեր արդար պահանջներուն, առաջին առնելու համար կնճիռներու և պատահականութեանց, որոնցմէ կ'զգուշանան:

*) Այս կոնդակը տպագրուած է «Արարատ»ի մարտ համարում:

Սակայն ներուի ինձի յիշել հոս, որ ամեն բանէ առաջ, Ձեր Վեհափառութեան իմաստուն քաղաքականութեան, յայտագրին չափաւորութեանը և վեհանձն ջանադրութեանց շնորհիւ է, որ Ն. Վ. Ջարին Կառավարութիւնը մեզի շնորհեց իր հզօր պաշտպանութիւնը, և որ, ձեռք առնելով մեր դատը, իրեն հետ մզեց նաև միւս դահլիճները:

Բոլոր Եւրոպիոյ միահամուռ գործողութեանց մասին կայացած այդ համաձայնութիւնը, զոր մեր հայրենակիցներուն հալածանքները և յանուն մարդկութեան եղած կոշերը երեսուն հինգ տարիէ ի վեր անբաւական եղած էին գոյացնելու, մենք այսօր կը պարտինք այդ շահուն, զոր պետութիւնները առաւելապէս ունին Եւրոպիոյ խաղաղութեան պահպանումին տեսակէտով:

Անոնք ըմբռնեցին արդարև, որ հայկական նահանգներու խղճալի վիճակը չէր կրնար աւելի երկար ատեն տևել առանց ծանր վտանգներու, որոնց առաջքը կարելի կըլլար առնել միայն բարենորոգումներու գործադրութեամբը:

Ասիկա եղաւ մին այն գլխաւոր փաստերէն զոր վեր հանեցի դահլիճներուն մօտ հայցելու համար իրենց միջամտութիւնը, և չափազանցած պիտի չըլլամ ըսելու թէ այդ շարժառիթն է՝ որ որոշեց իրենք դուրս գալուն այն անտարբերութիւններէն, զոր իրենց քաղաքականութիւնը ցոյց տուած էր մեր բարենորոգումներու նկատմամբ Պերլինի դաշնագրէն ի վեր:

Բայց միայն պետութիւնները չէ, որ շահ ունէին Հայաստանի մէջ բարենորոգումներու գործադրումին մէջ, Թուրքիա բարեբախտաբար շատ աւելի անմիջական շահ մը ունէր: Բ. Դուռը համոզուեցաւ որ Պետութիւնն իսկ պիտի վտանգուէր ցորքան մէջ տեղէն չէր վերցնէր խռովութեանց և օտար միջամտութեանց բոլոր հաւանականութիւնները, Հայկական նահանգներուն մէջ կարգապահութիւնն և արդարութիւնը վերահաստատելով:

Սակայն անիկա հասկցաւ, որ բարենորոգումները Պետութեան ղօրացումին և վերականգնումին ապահովագոյն

միջոցը պիտի ըլլային, և անտարակոյս այս բանն է առաւելապէս որ վերջնական համաձայնութիւնը գոյացնելու ծառայեց: Ձեր ս. Օծութիւնը թոյլ պիտի տայ ինծի յիշատակելու նաև, և մասնաւորապէս, մեր բանակցութեանց յաջողութեան նպաստող ազդակներուն մէջէն, այն կատարեալ միութիւնը որուն ապացոյցը տուին շարունակ ամեն երկիրների Հայերը, այն օրէն սկսեալ, որ Ձերդ Վեհափառութիւնը ստանձնեց նախաձեռնութիւնը պետութեանց ներկայացնելու իր ժողովրդին արդար պահանջները: Ձերդ ս. Օծութիւնը փափաք յայտնած է որ, պէտք եղած ատեն, շարունակիմ աշխատիլ իր ներկայացուցիչը հայաբնակ նահանգներու մէջ բարենորոգումներու կատարեալ յաջողութեան համար:

Վստահութեան այս նոր արտայայտութեան հանդէպ ջերմապէս զգացուած եմ, և թէպէտ որոշած էի, առաջին պաշտօնս լրանալուն, եպիպոսոսի մէջ հանգիստ առնել, մանաւանդ որ մեծ պէտք ունիմ, բայց կապահովցնեմ Ձեր Վեհափառութիւնը թէ իմ օժանդակութիւնս երբեք պիտի չի խնայիմ, և թէ անմիջապէս որ Եւրոպա վերադառնամ, դէպի յունիսի կիսուն, ինքզինքս սիրայօժար պիտի տրամադրիմ Ձեր Վեհափառութեան կատարելու համար ու ե պաշտօն, զոր օգտակար պիտի համարիք վստահիլ ինձի:

Կը խնդրեմ Ձեր Վեհափառութենէն որ, իմ անխախտ երախտագիտութեանս հետ բարեհաճիք ընդունիլ իմ խորապէս անձնուէր և յարգալից զգացումներուս նորոգ հաւաստիքը:

Պօղոս Նուպար

Քրդական շարժումն.

Տարօնի Հայոց առաջնորդարանը իւր 22 ապրիլի ներկայ 1914 թ. դրութեամբ Մուշից գրում է Նորին Ս. Օծութեան Վեհափառ Կաթողիկոսին հետևեալը.

Վեհափառ Տէր,

Ձեր Վեհափառութեան 10/4—914 թ. հեռագիրը ստա-